

U - 87

de ver. v

31

2000

~~Don 29~~

AC77

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Марта,
1895 г.

29 32

31-96



ԳԼՈՒԽ Ա.

ԹՈՒՆԻՆ ԻՐԱՆՑ ՔԱՐԱԽՐՃԻԹՈՒՄ.



ուեցարիայի Բերն լեռնա-
գաւառում, մարգա-
ղետիներով շրջա-
պատուած Կանդեր-
գրունդ գիւղից մէկ
ժամուայ ճանապարհ
հեռու, հնադարեան
եղևնուստուերի տակ
կանգնած է փոքրիկ և առանձնացած մի խրը-
ճիթ: Այդ խրճիթից ոչ հեռու, անտառա-
պատ ժայռերի բարձրութիւնից ցած է
թափուում մի առու. դա մեծ տեղատարափնե-
րի միջոցին իր հետ այնքան քար ու խիճ է
բերում, որ անձրևը կտրուելուց յետոյ ահա-
գին քարակոյտ է հաւաքուում այդտեղ: Այժմ այդ

քարակոյտի միջովն է անցնում սրնթաց ու վճիտ առուակը, որի մօտ եղած բնակարանն էլ այդ պատճառով կոչուում է քարախրճիթ:

Այստեղ էր բնակուում օրավարձով աշխատող քաջ Թուռնին. նրան սիրում էին այն բոլոր ագարակատէր գիւղացիները, որոնց մօտ բանում էր, որովհետեւ աշխատասէր ու խաղաղ, գործի մէջ ճշտապահ, վստահելի և ճշմարտախօս մարդ էր:

Թուռնին իր փոքրիկ խրճիթում ունէր մի երիտասարդ կին և մի փոքրիկ տղայ, որ ամուսինների ուրախութիւնն էր: Խրճիթի մօտ եղած փոքրիկ ախոռում կապած էր մի այծ, որի տուած կաթով էլ կերակրում էին մայրըն ու որդին. իսկ հայրն ամբողջ շաբաթն առաւօտից մինչև երեկոյ աշխատելով ագարակներում, այնտեղ էլ ստանում էր իր սընունդը: Միմիայն կիրակի ծրերն էր նատանն անցկացնում՝ իր կնոջ և փոքրիկ Թուռնիի հետ միասին: Տիկին Եղսին աշխատում էր, որ ամեն բան կանոնաւոր լինի իր խրճիթում: Թէև տնակը փոքր էր ու նեղուածք, բայց այնուամենայնիւ միշտ այնպէս կարգի բերած ու մաքուր էր լինում, որ ամեն մարդ սիրով էր ներս մտնում այդ արևկող սենեակը և հայր Թուռնին ո՛չ մի տեղ իրեն այնպէս լաւ

չէր զգում, ինչպէս տանը, իր քարախրճիթում, փոքրիկ տղային ծնկան վրայ նստեցրած:

Հինգ տարի շարունակ նրանք ապրում էին սիրով ու խաղաղ. թէև հարուստ չէին, բայց երջանիկ ու գոհ էին: Մարդն այնքան աշխատում էր, որ կարօտութիւն չէին զգում և իրենց հասարակ ապրուստից աւելին էլ չէին ցանկանում, որովհետեւ միմեանց սիրում էին և նրանց ամենամեծ ուրախութիւնը փոքրիկ Թուռնին էր: Երեխան մեծանում էր, թարմ ու առողջ էր և իր զուարթութեամբ ուրախացնում էր հօր սիրտը, երբ վերջինս կիրակի օրերը տանն էր մնում. իսկ լի օրերը, երբ հայրը մինչև մթնելը տանը չէր լինում, նա քաղցրացնում էր մօր աշխատութիւնը: Փոքրիկ Թուռնին այժմ արդէն չորս տարեկան էր և թեթև աշխատանքի ժամանակ օգնում էր մօրը՝ թէ խրճիթում, թէ ախոռում և թէ խրճիթի ետևը գտնուող փոքրիկ ագարակում: Առաւօտից մինչև երեկոյ ուրախ վազվզում էր մօր ետևից՝ հին եղևնու ճիւղերի վրայ եղող փոքրիկ թռչնակների նման: Մաբաթ երեկոները մայրն աւելի մեծ եռանդով էր սրբում ու մաքրում, որ շուտ վերջացնի, որովհետև հայր օրը հայրը

սովորականից առաջ էր բսնթող լինում. մայրը գործը վերջացնելուց յետոյ փոքրիկ Թուռիի ձեռքը բռնած մի քիչ տեղ հօր առաջն էր գնում: Այդ մի առանձին ուրախութիւն էր պատճառում փոքրիկին. նա արդէն գիտէր ճիշտ թէ տնային գործերն ինչ կարգով պէտք է կատարել. երբ մայրն սկսում էր սենեակը մաքրել, նա արդէն ուրախութիւնից թռչկոտում էր և շարունակ կրկնում. «այժմ կ'երթանք հայրիկին դիմաւորելու», «այժմ կ'երթանք հայրիկին դիմաւորելու», մինչև որ հասնում էր այդ վայրկեանը և մայրը նրա ձեռքը բռնած դուրս էր գալիս հօր առաջը:

Մայիս ամսին էր, այսպիսի շաբաթ երեկոներէից մէկը. դուրսը՝ ծառերի վրայ թռչանակներն ուրախ երգում էին և կապուտակ երկնքին նայում. ներսը՝ մայրը ջանասիրութեամբ մաքրում էր, որ շուտ վերջացնի և երեկոյեան արևի ոսկեգոյն ճառագայթների ուղեկցութեամբ տանից դուրս գայ. իսկ փոքրիկ Թուռին թռչկոտում էր երբեմն դուրսը, երբեմն էլ ներսը և ուրախ բացազանչում. «այժմ կ'երթանք հայրիկին դիմաւորելու»: Երկար ժամանակ չանցաւ և գործն էլ վերջացաւ. մայրը գլուխը փաթաթեց, լաւ գոգնօցը կապեց և խրճիթից դուրս եկաւ: Թուռին ու-

րախութիւնից վեր ու վեր էր թռչում և երեք անգամ մօր շուրջը պտտեց, յետոյ բռնեց նրա ձեռքը և մի անգամ էլ ուրախ կանչեց. «այժմ գնում ենք հայրիկին դիմաւորելու»: Նրանք գնացին դէպի առուն, անցան նրա վրայի փայտեայ փոքրիկ կամուրջից և հասան այն նեղ շաւիղը, որ ծաղկալի մարգագետնի միջով օձապտոյտ բարձրանում է մինչև այն ագարակը, ուր աշխատում էր հայրը:

Մայր մտնող արևի վերջին ճառագայթները փայլեցին մարգագետնի վրայ և Կանդերգրունդից հնչեց երեկոյեան ժամի զանգակը:

Մայրը կանգ առաւ և ձեռքերը կցեց:

«Ձեռքերդ կցիր, Թուռիկ, ասաց նա, «աղօթքի զանգակն է»:

Փոքրիկը հնազանդուեց:

«Ի՞նչ պէտք է աղօթեմ, մայրիկ, հարցրեց նա յետոյ»:

«Տուր մեզ և բոլոր յոգնածներին երջանիկ կիրակի. ամէն», ասաց մայրը ջերմեռանդութեամբ:

Թուռիկը նոյնն աղօթեց և յանկարծ աղաղակեց. «հայրիկը գալիս է»:

Ագարակից իր կարողացածին չափ արագ

վազելով ցած էր իջնում մի մարդ:

«Այդ հայրիկը չէ», ասաց մայրը և երկուսն էլ դէպի վազող մարդն առաջ գնացին: Երբ նրանք միմեանց հասան, վազողը կանգ առաւ և ասաց հեռավորով:

«Այլ ևս առաջ մի՛ գնաք, յետ դարձէք, Եղսի, հէնց ձեզ մօտ էի գալիս, մի՛ բան պատահեց»:

«Ախ, Աստուած իմ», աղաղակեց մայրը մեծ երկիւղով. «մի՛ բան է պատահել Թունիին»:

«Այո՛, փայտ կտրելու ժամանակ մի ծառ ընկաւ և ջարդեց նրան. այժմ նա պառկած է վերևը, ագարակում—բայց վերև մի՛ գնաք» աւելացրեց նա և պինդ բռնեց Եղսիին, որ լուրն առնելուն պէս իսկոյն ուզում էր դէպի ագարակը գնալ:

«Վերև չգնամ», ասաց նա արագ. «պէտք է գնամ, որ օգնեմ նրան և տուն բերել տամ»:

«Էլ չէք կարող օգնել, նա —նա արդէն մեռած է», զոգրոջուն ձայնով արտասանեց համբաւաբերը:

Յետոյ նա շուռ եկաւ և վազելով յետ գնաց, իրեն տրուած լանձնարարութիւնը կատարած համարելով:

Տիկին Եղսին ճանապարհին ընկած քա-

րի վրայ էր խոնարհուել և ոչ կարողանում է ոտի կանգնել, ոչ էլ գնալ: Նա իր դէմքը գոգնոցով ծածկեց և սկսեց այնպէս լալ ու հեծկլտալ, որ Թունին երկիւղից չգիտէր թէ ինչ անէ. նա կպաւ մօրը և սկսեց նոյնպէս լալ:

Սրդէն մութն էր, երբ Եղսին վերջապէս կարողացաւ զգաստանալ և իր մտնկան մասին մտածել: Փոքրիկը դեռ նստած էր նրա կողքին, գետնի վրայ, երկու ձեռքերը սեղմել էր աչքերին ու աղիողորմ կերպով լալիս էր: Մայրը վեր բարձրացրեց նրան:

«Վեր կաց, Թունիկ, տուն պէտք է գրնանք, ուշ է», ասաց Եղսին և բռնեց նրա ձեռքը:

Բայց երեխան դիմադրում էր:

«Ո՛չ, ո՛չ, սպասենք մինչև հայրիկը գայ», ասաց նա և յետ քաշեց մօրը:

Եղսիի աչքերը կրկին արտասուներով լըցուեցան. «Ախ, Թունիկ, հայրիկն էլ չի գայ», ասաց նա զսպելով հեկեկանքը. «նա այժմ արդէն տօնում է այն երջանիկ կիրակին, որ մենք աղօթքի մէջ ցանկացանք յոգնածների համար: Մեր սիրելի Աստուածը նրան երկինք տարաւ. այնտեղ այնպէս լաւ է նրա համար, որ մեծ սիրով այնտեղ կմնայ»:

«Ուրեմն մենք էլ գնանք այնտեղ», ասաց Թունիկը և իսկոյն ճանապարհ ընկաւ:

«Այո՛, այո՛, մենք էլ յետոյ այնտեղ կերթանք» խոստացաւ մայրը, «բայց այժմ դեռ գնանք տուն, մեր քարախրճիթը», և մայրը փոքրիկի հետ լուռ ճանապարհ ընկաւ դէպի իրենց խաղաղ խրճիթը:

Ագարակի տէրը միւս օրն ապսպրեց Եղսիին, որ ինքը կ'հոգայ ննջեցեալի թաղման համար կարևոր եղածը. թող նա միայն թաղման հանդիսին գայ և ոչ առաջ, որովհետև չի ճանաչի իր ամուսնուն՝ այնքան այլանդակուել է: Նա մի փոքր էլ դրամ էր ուղարկել, որ Եղսին մի առ ժամանակ ծանր հոգսեր չունենայ և խոստացաւ յետոյ էլ չըմոռանալ նրան: Եղսին հետևեց նրա խորհրդին և տանը մնաց, մինչև որ Կանգերգրունդի եկեղեցու զանգերը տխուր զոզանջիւնով թաղման հանդիսին հրաւիրեցին նրան: Նա գնաց իր ամուսնուն հանգստեան տեղն ուղեկցելու:—

Ծանր ու տխուր օրեր եկան Եղսիի համար. նրա բարի և քաջ ամուսինն այլ ևս չկար, նա իրեն բոլորովին անօգնական էր զգուժ: Իրա վրայ աւելացան նոր հոգսեր, որ մինչև այժմ անձանօթ էին նրան, որովհետև նրա ամուսինն ամեն օր փող էր վաստակում.

իսկ այժմ Եղսին համարեա՛ թէ յուսահատուում էր: Նա ոչինչ չունէր բացի մի այծից ու խրրճիթի ետևը գտնուող գետնախնձորի փոքրիկ ագարակից. դրանով ինքն ու իր որդին պէտքէ կերակրուէին, հագնուէին և բացի դրանից վճարէին իրենց փոքրիկ խրճիթի վարձը:

Եղսին միայն մի մխիթարուծիւն ունէր, բայց այնպիսի մի մխիթարուծիւն, որ նրան միշտ կրկին սփոփում էր, երբ կսկիծն ու հոգսերը նրան ճնշել էին կամենում. նա կա ըողանում էր աղօթել՝ թէև երբեմն արտասուալի աչքերով, սակայն միշտ հաստատ համոզմունքով, որ Աստուած կլսէ իր աղաչանքը:

Երեկոներն իր փոքրիկ Թունիին անկողնում պարկեցնելով՝ հէնց նրա կողքին չօքում էր գետնին և բարձր ձայնով աղօթում իր առաջուայ երգը, որ երբէք այնպէս սրբտի խորքից չէր դուրս եկել, ինչպէս այժմ:

Աղօթելու և աղաչանքի միջոցին մօր աչքերից առատ արցունք էր հոսում, իսկ փոքրիկ Թունին մօր լացից ու սրտալի աղօթքից սաստիկ սրտաշարժուելով՝ կցում էր իր ձեռքերը և նոյնպէս կամաց լալիս:

Այդպէս անցնում էր ժամանակը: Եղսին

Հագիւ կարողանում էր իրանց օրական ապրուստը հոգալ. իսկ փոքրիկ Թունին մի քանի գործերում արդէն կարողանում էր օգնել մօրը. նա արդէն եօթը տարեկան էր: Նա էր մօր միակ ուրախութիւնը, որովհետեւ հնազանդ էր և յօժարութեամբ կատարում էր նրա պատուէրները. նա շարունակ անբաժան մնալով մօրից, ճիշտ գիտէր նրա զբաղուելու գործերը և իր կարողութեան չափ սիրով օգնում էր նրան: Երբ մայրը փոքրիկ ագարակումն էր աշխատում, նա էլ անպէտք խոտերն էր գժլտում և քարերը դէն ածում: Երբ մայրն ախոռից դուրս էր բերում այժը, խրճիթի շուրջն արածելու, նա քայլ առ քայլ հետևում էր այժին, որովհետեւ մայրը պատուիրում էր այժը պահպանել, որ չփախչի: Զմեռը, երբ մայրը ջահրի առաջը նստած թել էր մանում, նա էլ ամբողջ ժամանակը նրա կողքին նստած՝ իր համար ձմեռուան ոտնամաններ էր գործում պինդ ասուի շերտերից. այդ էլ մայրն էր սովորեցրել: Նա բացի իր մօրն ուրախ ու գոհ տեսնելուց՝ ոչինչ աւելի մեծ ցանկութիւն չուներ: Թունին ամենից բաղդաւոր էր զգում իրան կիրակի օրերը, երբ մայրը հանգստանալով գործ չէր շինում և նրա հետ միասին նստելով խրճիթի առաջն

եղած փոքրիկ փայտեայ նստարանի վրայ՝ հօր մասին էր պատմում և էլի ուրիշ բաների մասին խօսում նրա հետ:

Եկաւ և Թունիկի ուսումնարան գնալու ժամանակը: Մօրից հեռանալը և այնքան երկար ժամանակ դուրսը մնալը նրան շատ ծանր էր թւում: Կանգերգրուեց գնալու և այնտեղից վերագառնալու ահագին ճանապարհն արդէն բաւականին ժամանակ էր խլում, այնպէս որ այլ ևս Թունին ցերեկը տանը, մօր մօտ չէր լինում, այլ միայն գիշերը: Նա ամբողջ օրը սպասելով տուն վերագառնալու ժամանակին, ուրախութիւնից այնպէս շուտ էր տուն գալիս, որ մայրը զարմանում էր: Հէնց որ դասերը վերջանում էին, նա իր ընկերների հետ ժամանակ չէր կորցնում և իսկոյն տուն էր վազում: Նա միւս երեխաների նման չէր, որովհետեւ միշտ մենակ իր լուռ աշխատող մօր հետ էր եղել և սովորել էր առանց աղմուկ անելու շարունակ մի որոշ գործով զբաղուել:

Այդ պատճառով, երբ աշակերտներն ուսումնարանից դուրս գալիս մեծ աղմուկ էին բարձրացնում, մէկզմէկու ետևից վազում, իրանց ուժերը փորձում և միմեանց գետնին էին խփում, կամ միմեանց այնպէս քաշքշում,

որ գլխարկները հեռու էին ընկնում և թիկնոցները կիսով չափ պատռում, օտարօտի էր թւում և ուրախութիւն չէր պատճառում նրան: Յաճախ կռուողները նրան էլ կանչում էին ու ասում. «արի, դու էլ կռուիր մեզ հետ». և երբ նա փախչում էր, ետևից բղաւում էին. «չիմար ես»: Բայց այդ էլ չէր օգնում, նա չէր լսում նրանց և բոլոր ուժով վազում էր դէպի տուն, մօր մօտ:

Ուսումնարանում նրա հետաքրքրութիւնը շարժեց մի նոր բան. նա տեսել էր թէ ինչպէս վերին դասարանի աշակերտներն արտանկարում էին սպիտակ տախտակների վրայ նկարուած սիրուն կենդանիները: Նա շուտով փորձեց այդ իր մատիտով և տանը մի կտոր թուղթ ունեցած ժամանակը շարունակ կենդանիներ էր նկարում: Յետոյ նկարածը դուրս կտրելով՝ ուզում էր սեղանի վրայ կանգնեցնել, բայց չէր լինում. յանկարծ նա մտածեց, որ եթէ դրանք փայտից լինէին, իհարկէ կարող էին կանգնել: Նա սկսեց մի փայտի կտոր տաշել իր դանակով՝ մինչև որ մարմինն ու չորս ոտքերը պատրաստ էին, բայց պարանոցի ու գլխի համար փայտը չբաւականացաւ, նա ստիպուեց մի ուրիշ փայտի կտոր վերցնել և առաջուց որոշել թէ ո՞րքան

բարձրութիւն պէտք է ունենայ և գլուխը ո՞ր կողմը պէտք է լինի: Այդպէս տաշում և կրտրում էր Թունին շարունակ, մեծ համբերութեամբ, մինչև որ այժի նման մի բան էր շինում և մեծ բաւականութեամբ մօրը ցոյց տալիս: Մայրն էլ շատ ուրախանում էր՝ տեսնելով նրա հնարագիտութիւնը և ասում. «ապագայում դու շատ լաւ փայտի քանդակագործ կըլինես»: — Այդ ժամանակից սկսած Թունին ճանապարհին ընկած բոլոր փայտի կտորները վերցնում էր և տնտղում՝ թէ արդեօք քանդակելու համար պէտք կ'գա՞յ. և եթէ պէտքական էր գտնում, իսկոյն վերցնում էր հետը, այնպէս որ երբեմն բոլոր գրպանները լիքը փայտի կտորներ էր բերում տուն, մի տեղ ժողովում գանձի նման և օգտտ ըուպէին իսկոյն սկսում էր քանդակել:

Այսպէս անցան տարիներ Թէև Եղսին միշտ ծանր և բազմատեսակ հոգսեր ունէր, բայց Թունին ուրախացնում էր նրա սիրտը: Նա առաջուայ նման սիրում էր մօրը, իր կարողացածին չափ օգնում նրան և միևնոյն ժամանակ զբաղւում էր իր խաղաղ գործով, որի մէջ հետզհետէ յաջողութիւն էր ունենում և հմուտութիւն ձեռք բերում: Թունին ո՛չ մի տեղ իրեն այնպէս լաւ չէր զգում, ինչպէս

իրենց քարախրճիթում, ուր նա փայտեր էր քանդակում, իսկ մայրն ուրախ իր գործով զբաղուած՝ դուրս ու տուն էր անում, սիրալի խօսքեր ասում նրան և վերջը նոյնպէս գալիս, նստում էր նրա կողքին՝ իր ջահրի առաջը:



ԳԼՈՒԽ Բ.

Ծ Ա Ն Ի Վ Ճ Ի Ռ Ը.

31-96



ուսին ձմեռն արդէն տասերկու տարեկան էր դարձել և ծխական դպրոցի ուսումն աւարտել. ժամանակ էր այժմ նրա համար մի այնպիսի գործ գտնել, որից նա փոքր ինչ փող ստանար և միևնոյն ժամանակ ապագայի համար մի բան սովորէր: Արդէն գարուն էր և դաշտային աշխատանքն սկսուել էր: Մայրն ուզում էր



ագարակատիրոջը հարցնել թէ արդեօք Թու-
նիի համար թեթև գործ չի գտնուի, բայց
երբ այդ մասին խօսում էր, Թունին աղաչելով
ասում էր. «Ախ, մայրիկ, ագարակ մի ուղար-
կիր ինձ, թոյլ տուր որ ես փայտի քանդա-
կագործ դառնամ»:

Մայրը թէև հակառակ չէր, բայց չ'գի-
տէր թէ ինչպէս անէ. ագարակատիրոջը նա
ճանաչում էր իր մարդու կենդանութեան ժա-
մանակից, որի մահից յետոյ էլ երբեմն եր-
բեմն փոքր ինչ փայտ ու ալիւր էր ստացել
նրանից: Նա յոյս ունէր, որ Թունին ագարա-
կում թեթև աշխատանքի վարժուելուց յետոյ՝
ծանր գործին էլ կ'ընտելանայ: Մի շաբաթ
երեկոյ, երբ մայրն իր աշխատանքը վերջաց-
նելուց յետոյ Թունիի հետ միասին նստած
վայելում էր իրենց աղքատիկ ընթրիքը, մայ-
րը մի անգամ էլ կրկնեց.

«Թունի, ժամանակ է, որ քո գործի վե-
րաբերութեամբ մի քայլ անենք. կարծեմ ա-
մենից լաւն այն կլինի, որ ես վաղը գնամ
ագարակատիրոջ մօտ»:

«Ախ, մայրիկ, մի անի այդ», իսկոյն սկսեց
աղաչել Թունին. «մի գնա նրա մօտ, թոյլ տուր
որ ես քանդակագործ դառնամ. ես այնքան
կ'աշխատեմ ու փոխ կվաստակեմ, որ դու

ստիպուած չես լինի այդքան չարչարուելու.
բացի դրանից ես կարող եմ տանը մնալ, քեզ
մօտ, հակառակ դէպքում դու պէտք է բոլո-
րովին մենակ մնաս և ես էլ չեմ կարող դի-
մանալ՝ եթէ ստիպուած լինեմ շարունակ ու-
րիշ տեղ լինել: Թոյլ տուր, որ քեզ մօտ մը-
նամ, մայրիկ, ուրիշ տեղ մի ուղարկի ինձ»:

«Ախ, սիրելի Թունի», ասաց մայրը,
«ի՛նչ կ'տայի, եթէ կարողանայի քեզ միշտ
ինձ մօտ պահել, բայց այդ չի կարող լինել.
քանդակագործ դառնալու համար մէկը պէտք
է լինի, որ ճանապարհ ցոյց տայ, ես չգիտեմ
այդ. նոյն իսկ եթէ կարողանայիր էլ, ի՛նչպէս
պէտք է ծախէինք քո պատրաստած իրերը.
դրա համար պէտք է շատ մարդ ճանաչել և
շատ տեղ մանդալ, եթէ ոչ այդ աշխատանքը
հաց չի տայ մեզ: Երանի թէ մէկը լինէր, ո-
րի հետ այդ մասին խօսէի և բարի խորհուրդ
հարցնէի»:

«Մէ՛թէ ոչոքի չես ճանաչում, մայրիկ,
որին կարողանայիր խորհուրդ հարցնել». ասաց
Թունին երկիւղով և ինքն էլ սկսեց մտածել՝
թէ արդեօք ո՞ւմ կարելի էր դիմել: Մայրն էլ
սկսեց մտածել:

«Կերթամ մեր քահանայի մօտ, նա ինձ
բարի խորհուրդ կ'տայ», ասաց մայրը, ինքն

էլ ուրախանալով իր գտած ելքի համար:

Թուռնին երջանիկ զգաց իրեն այդ ըօպէին. իսկոյն վճռեցին որ առաւօտեան վաղ եկեղեցի գնան, որտեղից մայրը պէտք է քահանայի մօտ գնար, իսկ Թուռնին պէտք է դուրսը սպասէր նրան: Ինչպէս որ որոշել էին, այնպէս էլ արին կիրակի առաւօտեան: Մայրը գրպանը դրեց մի երկու հատ քանդակուած կենդանիներ, որ քահանային ցոյց տայ իր որդու հմտութեան ու շնորհքի ապացոյցը: Քահանան մեծ ուրախութեամբ ընդունեց նրան, իր կողքին նստեցրեց և կարեկցաբար հարցրեց թէ ինչ խնդիր ունի, որովհետև ճանաչում էր Եղսիին և գիտէր թէ ինչպէս քաջութեամբ դիմացաւ նա իրեն հասած թշուառութեանը: Եղսիին պատմեց նրան բոլորը՝ թէ ինչպէս Թուռնին մանկութիւնից սկսած սիրով զբաղուել է փայտ քանդակելով և այժմ սրբտով ոչինչ այնպէս չէ փափազում, ինչպէս այդ գործով զբաղուելը և թէ ինքը չգիտէ թէ ինչպէս պէտք է սովորի նա և թէ յետոյ ինչպէս պէտք է պատրաստի իրերը ծախեն: Վերջը ցոյց տուեց քանդակուած փոքրիկ կենդանիներն՝ իբրև ապացոյց իր որդու ճարտարութեան: Քահանան բացատրեց նրան, որ այդ գործը դժուար գլուխ գալու բան է: Թէև

այդ երկու այծիկներն էլ վատ չէին շինուած, այնուամենայնիւ Թուռնին օրինաւոր արհեստաւոր դառնալու և դրանով փող վաստակելու համար՝ պէտք է առաջ մի վարպետի մօտ սովորի, որովհետև միմիայն փոքրիկ կենդանիներ ու արկղիկներ շինելով ոչինչ չի դուրս գայ, վաստակ էլ չի ունենայ և դրանով միայն ժամանակ կ'կորցնի: Բայց մօտակայ Ֆրուտիգէն գիւղում կայ մի շատ հմուտ և յայտնի քանդակագործ, որ շատ սիրուն ու մեծ իրեր է պատրաստում, որոնք մինչև հեռու Ամերիկայ են հասնում: Նա փայտից անասունների ամբողջ խմբեր էր քանդակում բարձր քարաժայռի վրայ, ալպեան այծեր, արծիւներ և ամբողջ ալպեր՝ կովերով ու անդէորդով *): Նա խորհուրդ տուեց Եղսիին՝ այդ վարպետի հետ խօսել: Եթէ Թուռնին նրա մօտ սովորի, յետոյ նա կարող է Թուռնիի պատրաստած իրերի ծախելուն էլ օգնել, որովհետև դրա համար նա ուրիշ միջոցներ շատ ունի:

Եղսիին շնորհակալութիւն յայտնեց քահանային և դուրս եկաւ. նրա սիրտը նոր յոյսերով լցուեց: Դրան առաջը մեծ անհամբերութեամբ սպասում էր Թուռնին: Մայրն անմիջապէս

*) Senn—անդէորդ, կոյարած:

ստիպուած էր պատմել այն բոլորը, ինչ որ ասել էր քահանան և երբ վերջը խօսեց Փրուտիգէնի քանդակագործի մասին, Թուռնին յանկարծ ընդհատեց նրան և խնդրում էր. «Արի՛, մայրիկ, հենց իսկոյն գնանք նրա մօտ»:

Բայց մայրն այդ մասին չէր էլ մտածել. նա շատ առարկուլ թիւններ արաւ, բայց Թուռնին այնպէս աղաչում էր, որ վերջապէս նա ասաց. «Ռեռ պէտքէ տուն գնանք ու մի բան ուտենք, ճանապարհը շատ հեռու է. բայց շուտ կ'վերջացնենք և իսկոյն ճանապարհ կ'ընկնենք»: Այսպիսով նրանք շտապով դէպ իրանց խրճիթը դիմեցին, մի փոքր կաթ ու հաց կերան և իսկոյն նորից ճանապարհ ընկան: Նրանք մի քանի ժամուայ ճանապարհ ունէին գնալու, բայց Թուռնին այնպէս զբաղուած էր ապագայի ծրագիրներով ու մտքերով, որ ժամանակն երազի նման անցաւ նրա համար և բոլորովին զարմացած նայեց, երբ մայրն ասաց. «Ահա երևում է Փրուտիգէնի եկեղեցու աշտարակը»:

Կարճ ժամանակից յետոյ նրանք արդէն կանգնած էին քանդակագործ վարպետի տան առաջը և դուրսն եղող երեխաներից իմացան, որ վարպետը տանն է:

Մի մեծ, տախտակով յատակը ծածկուած սենեակում, սեղանի մօտ, նստած էր վար-

պետն իր կնոջ հետ միասին. երկուսն էլ նա յում էին առաջները դրուած մեծ գրքի սիրուն նկարուած կենդանիները, որոնք կարող էին պէտք գալ քանդակելու ժամանակ: Երբ նորեկները ներս մտան, տանտէրը բարևեց նրանց և առաջարկեց նստել այն տախտակեայ նստարանի վրայ, որի վրայ իրենք էին նստած և որ պատերի երկարութեամբ տարածուած էր ամբողջ սենեակում: Եղսին ընդունեց հրաւերը և անմիջապէս սկսեց պատմել թէ ինչի համար է եկել և ինչ է ցանկանում իմանալ նրանից:

Այդ միջոցին Թուռնին կանգնած էր՝ ինչպէս յատակին մեխուած և աչքերն անշարժ յառել էր մի կէտի վրայ: Նրա առաջը, պատի մօտ դրուած էր մի ապակեայ պահարան, որի մէջ երևում էին երկու բարձր քարաժայռեր՝ փայտից քանդակուած: Մէկի վրայ կանգնած էր մի ալպեան այծ իր ձագերով. նրանք այնպիսի սիրուն, բարակ ոտքեր ունէին, գեղեցիկ գլուխներն այնպէս բնական կերպով էին պարանոցի հետ կապակցուած, որ կարծես թէ շարժուում են և փայտից չեն շինուած: Միւս քարաժայռի վրայ կանգնած էր մի որսորդ՝ հրացանը կողքին դրած. նրա գլխարկը, որ մինչև անգամ փետուր էլ ունէր, ծածկած էր գլխին.

և այդ բոլորն էլ այնպէս նուրբ քանդակուած էր, որ տեսնողը պէտքէ կարծէր թէ խօսական գլխարկ ու փետուր է, բայց ամենն էլ փայտից էր:

Որսորդի մօտ կանգնած էր շունը և այնպէս էր թւում՝ թէ շարժում է պոչը: Թունին կախարդուածի նման էր, չէր շարժուում տեղից և հազիւ էր շունչ քաշում:

Երբ Եղսին իր խօսքը վերջացրեց, վարպետը հասկացրեց նրան, որ գործն այնպէս հեշտ չէ, ինչպէս թւում է. օրինաւոր բան սովորելու համար հարկաւոր է բաւականին ժամանակ և աշխատանք: Ինքը կ'ընդունէ իր մօտ Թունիին, որովհետև ինչպէս երևում է, նա սէր ունի դէպի այդ գործը, բայց նա պէտքէ մի երկու ամիս ժամանակ Ծրուտիգէնում մնայ՝ վճարելով թէ ապրուստի և թէ սովորելու համար. մնում է Եղսինն որոշել թէ արգեօք կարող է այդքան փող վճարել. դրա փոխարէն վարպետը խոստացաւ, որ տղային օրինաւոր բան կ'սովորեցնի և ցոյց տուեց իր պատրաստած իրեղէնները:

Եղսին սկզբում ցաւից ու երկիւղից չէր կարողանում պատասխանել: Նա իմացաւ այժմ, որ իր որդու ամենամեծ ցանկութեան կատարուելը բոլորովին անկարելի է: Թունիի ապրուստի և սովորելու համար վճարելիք կարե-

ւոր փողն այնքան աւելի էր իր աշխատանքի գումարից, որ խնդիրն արդէն վճռուած էր. Թունիի բոլոր ծրագիրներն ոչնչացան:

Մայրը տեղից վեր կացաւ, շնորհակալութիւն արաւ վարպետին, որ յօժարում է տղային վերցնել և յայտնեց նոյնպէս, «ր ստիպուած է ձեռք վերցնել այդ մտքից: Յետոյ նշան արեց Թունիին, որ դուրս գայ, բայց նրա հայեացքը դեռ ևս այնպէս անշարժ կերպով ուղղուած էր դէպի պահարանը, որ ոչինչ չ'նկատեց. մայրը բռնեց նրա ձեռքից և կամաց դուրս եկաւ սենեակից:

Դուրսը Թունին խորը շունչ քաշելով ասաց. «մայրիկ, տեսա՞ր պահարանում եղածը, տեսա՞ր»:

«Այո՛, այո՛ — տեսայ, Թունի». հառաչելով պատասխանեց մայրը, բայց դու լսեցի՞ր վարպետի ասածները»:

Սակայն Թունին ոչինչ չէր լսել, նրա բոլոր ուշք ու միտքը միմիայն մի կէտի վրայ էին ուղղուած եղել:

«Ո՛չ, ոչինչ չեմ լսել, ե՛րբ կարող եմ գընալ», հարցրեց նա բաղձանքով:

«Ա՛խ, անկարելի է, Թունի, մի նեղանայ, չեմ կարող, թէև սիրով կ'ցանկանայի», հաւատացնում էր մայրը. «նրա պահանջածը մեր

տուած ամբողջ տարուայ տան վարձից աւելի է և ինքդ գիտես թէ ինչպիսի ծանր աշխատանքով միայն կարողանում եմ այդ էլ վճարել»:

Այդ շատ ծանր հարուած էր Թուենիի համար. նրա երկար տարիները յոյսերը փշուր փրշուր եղան. բայց նա գիտէր թէ ինչպէս էր աշխատում մայրը, թէ ինչպէս իրեն զրկելով՝ միշտ մտածում էր կարողացածին չափ, փոքրիկ ուրախութիւն պատճառելու որդուն: Նա ոչ մի խօսք չ'արտասանեց, լուռ կուլ տուեց աչքերից թափուող արցունքը, բայց սաստիկ տխրեց՝ իր յոյսերն ի դերև ելնելու պատճառով, որովհետև առաջին անգամ տեսաւ՝ թէ ինչ հրաշալի բաներ կարելի է շինել մի կտոր փայտից:



ԳԼՈՒԽ Գ.

Ս Ա Ր Ե Ր Ի Վ Ր Ա Յ.



ԻՆՍ ԱՌԱԼՕՒՆ ագարակի տէրն ապսպրեց Եղսիին, որ երեկոյեան դէմ իր մօտ գայ. հետը խօսելու բան ունի: ձիշտ ժամանակին Եղսիին իր բրիչը մի կողմը դրեց, կապեց մաքուր գոգնոցն ու ասաց. «Թուենի, գործդ վերջացնելուց յետոյ այժը կ[թ]իր, թարմ խոտ ածա՛ տակը, որ լաւ հանգստանայ. մինչև այդ վերջացնես՝ ես էլ կ'գամ»: Նա բարձրացաւ դէպի ագարակը: Ագարակատէր գիւղացին կանգնած էր յարդանոցի բաց դրան առաջը և ուրախ դէմքով դիտում էր իր սիրուն կո-

վերը, որ երկար շարքերով դէպի աղբիւրն էին գնում: Եղսին մօտեցաւ նրան:

«Այդպէս, լաւ արիւր, որ եկար», ասաց նա, ձեռը մեկնելով Եղսիին. ես ձեզ կանչել տուի ձեր երեխայի պատճառով. նա այժմ այն հասակումն է, որ կարող է թեթեւ աշխատանքի ձեռնարկել և ձեզ էլ մի փոքր օգնել, գօնէ իրեն կարող է պահել»:

«Ես էլ եմ մտածել այդ մասին», պատասխանեց Եղսին, «և ուզում էի ձեզ հարցնել թէ արդեօք կարելի է որ նրան դաշտային մի թեթեւ աշխատանք տայիք»:

«Լաւ է ուրեմն», շարունակեց ագարակատէրը, «ես մի փոքրիկ պաշտօն ունեմ նրա համար, որ առողջարար և միւսնոյն ժամանակ այնքան քիչ ջանք է պահանջում, որ կարելի է ասել թէ՛ ոչինչ աշխատանք չի ունենայ: Թող նա իմ կովերի հետ փոքրիկ Ալպը գնայ. մեծ Ալպի վրայ մեր անդէորդն է՝ իր տղայի հետ. մի ծառայ էլ կայ այնտեղ, նա ամեն առաւօտ ու երեկոյ կ'գայ փոքր Ալպ՝ կովերը կ'թելու. այսպիսով ձեր փոքրիկը բոլորովին մենակ չի լինի և բացի կովերը պահելուց ոչինչ գործ չի ունենայ. նա պէտք է նայէ միայն, որ կովերը չ'փախչեն և եղջիւրներով միմեանց հետ չ'կռուեն — ուրիշ ոչինչ: Իրա փոխարէն նա

կապրի Ալպի վրայ, ինքնիշխան կլինի այնտեղ և իր սրտի ուզածի չափ կաթը կստանայ. ոչ մի թագաւոր էլ դրանից լաւ չի կարող ապրել»:

Եղսին մի փոքր վախեցաւ այդ առաջարկութիւնը լսելով. եթէ Թուսինն մինչև այժմ յաճախ ծառաների հետ եղած լինէր և անասուններ պահած, կամ եթէ ուրիշ բնաւորութիւն ունենար, աւելի վայրենի լինէր և այս ու այն կողմն ընկնող ու հրամայող — լաւ կլինէր. բայց նա այնքան հանգիստ ու երկչոտ էր, որ առանց գործին տեղեակ լինելու եթէ առաջին անգամ իսկոյն բոլորովին մենակ մնար Ալպի վրայ՝ մի քանի ամիս շարունակ և կովերի ամբողջ հօտը պահէր, — շատ կգոհարանար: Ի՛նչ անօգնական դրութեան մէջ կ'ընկնէր խեղճ տղան, որ առանց այդ էլ ամուր կազմուածք չունէր, եթէ իրեն կամ հօտին մի բան պատահէր: Եղսին իր բոլոր կասկածն ու երկիւղը յայտնեց ագարակատէր գիւղացուն, բայց նա նշանակութիւն չտուեց և ասաց, որ ընդհակառակը տղայի համար շատ լաւ կլինի, եթէ մի անգամ տանից հեռանայ. նա Ալպի վրայ աւելի կ'ամրապնդուի, քան թէ տանը և ոչինչ էլ չէ կարող պատահել. նրան մի եղջիւրի փող կտան, որ անհա-

ճոյ դէպք պատահելիս իսկոյն կ'սկսի փշել և այդ ձայնի վրայ ցած կ'գայ միւս Ալպի վրայ եղող ծառան. կէս ժամուս նա արդէն Թուսի մօտ կ'լինի:

Վերջը Եղսին մտածեց, որ գիւղացին իրենից լաւ է հասկանում այդ բանը և համաձայնեց, որ յաջորդ շաբաթ կովերը Ալպ գնալիս՝ Թուսին էլ հետները գնայ: «Երբ Ալպից կ'վերադառնայ, բաւականին փող և մի ձեռք նոր զգեստ կ'ստանայ Թուսին. ձեզ համար էլ լաւ կ'լինի, այդ փողը ձեռքը գործ կ'ածէք»:

Վերջացրեց իր խօսքը գիւղացին: Եղսին շնորհակալութիւն անելով մնաք բարով ասաց և տուն վերադարձաւ:

Թուսին լսելով, որ ինքն երկար ժամանակ—առանց այդ միջոցում գոնէ մի անգամ տուն գալ կարողանալու—պէտքէ բաժանուած լինի մօրից՝ սկզբում չէր համաձայնում, բայց երբ մայրը նկարագրեց թէ ի՞նչ թեթեւ գործ կունենայ, թէ սարերի վրայ նա օրինաւոր կ'կազդուրուի և այդպիսով ապագայում աւելի լաւ աշխատանք կունենայ և վերջապէս թէ գիւղացին խոստանում է լաւ վարձատրել և մի ձեռք էլ նոր հագուստ տալ, Թուսին այլ ևս չ'հակառակեց և ասաց, որ ինքն էլ ուզում

է սիրով մի բան անել և բոլոր հոգսը մօր վրայ չ'թողնել:

Այժմ մայրն էլ մտածեց, որ եթէ Թուսին ամբողջ ամառը տանը չի լինի, գուցէ ինքն էլ կարող է գնալ Ինտէրլակէն, ուր ամբողջ ամառը բազմաթիւ օտարականներ են լինում, և մի մեծ հիւրանոցում պաշտօն կ'գտնի. այդպիսով նա բաւականին փող կ'վաստակի և յաջորդ ձմրան գալուստ առանց հոգսերի կ'սպասի: Ինտէրլակէնում նրան լաւ ճանաչում էին, որովհետև ամուսնանալուց առաջ մի քանի ամառ աղախնութիւն էր արել մի հիւրանոցում:

Գիւղացու բազմաթիւ կովերն Ալպ տանելու օրը մայրը Թուսինն յանձնեց իր կապոցն ու ասաց. «այժմ գնա՛, Աստուած քեզ հետ. չ'մոռանաս լուսանալիս ու մթնելիս աղօթել. այդպիսով Աստուած էլ քեզ չի մոռանայ և Նրա պաշտպանութիւնն աւելի լաւ է մարդկային կամքից»:

Թուսին փոքրիկ կապոցը ձեռին հօտի ետևից գնալով՝ բարձրացաւ սարը:

Շատ չ'անցաւ Եղսին էլ փակեց իր խրճրթի դուռը. այժը տարաւ ագարակը և պահ տուեց գիւղացուն: Ագարակատէրը լսելով նրա Ինտէրլակէն գնալը, խոստացաւ նրա

այժն այնպէս լաւ պահել, որ վերադարձին առաջնուանից երկու անգամ աւելի կաթը տայ. իսկ ամառուան կաթի փոխարէն խոստացաւ պանիր տալ: Այժմ Եղսին հանգիստ սրտով գնաց Ինտէրլակէն:

Մի քանի ժամ էր արդէն, որ տաւարը բարձրացել էր սարը. անդէորդը կովերի մեծ մասն առաջ արած դէպի ձախ ծռուեց, իսկ ծառան Թուռիի հետ միասին դէպի աջ տանելով իրենց հետ սակաւաթիւ կովեր, բայց շատ արջառ, որովհետեւ փոքր Ալպի վրայ շատ կով պահելն անյարմար էր. կաթն այնտեղից ամեն անգամ պէտքէ տանէին մեծ Ալպը, ուր շինուած էր անդէորդի խրճիթը:

Սրդէն հասել էին Ալպի ամենաբարձր կէտը: Այնտեղ կանգնած էր մի փոքրիկ խրճիթ. չորս կողմն արօտից աւելի ոչինչ չկար. ոչ մի ծառ կամ թուփ չէր երևում: Խրճիթի մէջ, մէկ կողմը՝ պատի վրայ մեխով ամրացրած էր մի փոքրիկ նստարան. դրա առաջը դրուած էր մի սեղան. միւս կողմը պատրաստուած էր խոտի անկողին. անկիւնում դրուած էր դարձեալ մի ուրիշ փոքրիկ ու կլոր աթոռ, իսկ սրա վրայ մի փայտեայ կուժ: Թուռին և ծառան ներս մտան. վերջինս մէջքից ցած բերեց մեծ փայտեայ կաթնամանը

և գետնին դրեց, միջից հանեց մի կլոր հաց և մի ահագին մեծութիւն ունեցող կտոր պանիր, երկուսն էլ սեղանի վրայ դրեց և սաց. «Դանակ ինքդ էլ կ'ունենաս»: Թուռին գլխով արեց: Յետոյ ծառան նորից շալակեց ահագին կաթնամանը, վերցրեց փայտեայ կուժը և դուրս գնաց: Թուռին հետեւեց նրան: Ծառան մեծ անօթից հանեց մի փայտեայ դոյլ, նստեց սենեակից վերցրած փոքրիկ կլոր աթոռի վրայ և սկսեց մէկը միւսի յետեւից կթել կովերը: Եթէ կովերից մէկը հեռու էր գնացել, նա բղաւում էր. «այս կողմը քշիր»: Թուռին էլ հնազանդուում էր: Երբ դոյլը լրջւում էր, նա կաթն ածում էր մեծ անօթի մէջ և լուռ շարունակում էր, մինչև որ կլթում էր բոլոր կովերը: Վերջը ծառան կուժը լցրեց կաթով՝ տուեց Թուռիին, կաթնամանը շալակեց, դոյլը ձեռքին բռնեց ու «բարի գիշեր» ասելով ցած գնաց Ալպից:

Այժմ Թուռին բոլորովին մենակ մնաց: Նա կաթով լի կուժը խրճիթը ներս տարաւ, նորից դուրս եկաւ և հետաքրքրութեամբ նայեց իր շուրջը: Միւս կողմը նա տեսաւ մեծ Ալպն անդէորդի խրճիթով, բայց երկու Ալպերի մէջ ընդարձակ հովիտ կար. միւս Ալպը գնալիս առաջ պէտքէ այդ հովիտն իջնէին: Երկու

Ալպերի շուրջն էլ երևում էին մեծ ու թանձր լեռներ, որոնց մի մասը ժայռոտ, գորշ ու ճեղք-ճեղքուած էր, միւսները ձիւնով ծածկուած. բոլորն էր այնքան բարձր էին, այնքան սրածայր գագաթներ ու լայն լանջեր ունէին, որ Թունիին թուաց՝ թէ դրանք վիթխարի հսկաներ են և ամեն մէկն էլ երես ունի և նայում է իրեն: Սակայն պայծառ երեկոյ էր. դիմացի Ալպը դեռ նոր փայլում էր ոսկեգոյն ճառագայթներով. մթնագոյն լեռներից երևան եկաւ մի փոքրիկ աստղ և այնպէս ուրախ նայեց Թունիին, որ սա իրեն լաւ զգաց: Նա մտածում էր մօր մասին՝ թէ արդեօք այժմ որտեղ կլինի նա, և մտաբերում էր թէ ինչպէս այս միջոցին ինքը կանգնած էր լինում խրճի առաջը և քաղցր խօսում նրա հետ:

Այդ ժամանակ միայնակութեան զգացմունքն այնպէս յանկարծ տիրեց նրան, որ վազեց դէպի խրճիթը, անկողնի վրայ ընկաւ, դէմքը խոտի մէջ ծածկեց և լուռ հեկեկում էր, մինչև որ յոգնածութիւնից յաղթուած՝ քունը տարաւ:

Պայծառ առաւօտը դէպի դուրս գրաւեց նրան: Ծառան արդէն եկել էր. նա կիթեց կովերը, ոչ մի խօսք չ'ասաց և կրկին յետ դարձաւ:

Այդ օրը շատ, շատ երկարեց. շուրջը

կատարեալ լուութիւն էր տիրում. կովերն արածում ու պառկում էին արևածիճաղ արօտի վրայ: Թունին մի երկու անգամ խրճիթը մըտաւ, կաթը խմեց և պանիր ու հաց կերաւ. յետոյ նորից դուրս եկաւ, գետնին նրստեց, գրպանից հանեց փայտի կտորները և սկսեց տաշել. թէև նա այլ ևս քանդակագործ դառնալու յոյսը չունէր, բայց այնուամենայնիւ չէր կարող թողնել այդ արհեստը և գոնէ իր կարողացածին չափ քանդակել: Վերջապէս նորից երեկոյեղաւ. ծառան եկաւ ու կրկին գնաց՝ առանց մի խօսք ասելու. Թունին էլ ասելու ոչինչ չունէր:

Այսպէս օրերն անցնում էին մէկը միւսի նման. նրանք շատ երկար էին տևում: Մեր երեկոներն սկսում էր մթնել, Թունին շատ անհանգիստ էր լինում. բարձր սարերը նրան այնպէս սև ու սպառնալի էին թւում, որ կարծում էր թէ՛ յանկարծ իրեն մի բան կանեն: Յետոյ շտապով վազում էր դէպի խրճիթը և իր խոտի անկողինը մտնում:

Արդէն շատ օրեր էին անցել այսպէս, մէկը միւսի նման. միշտ անամպ երկնքի վրայ երևում էր արևը, միշտ երեկոները մութը սարերի վրայից ծագում էր փոքրիկ և ուրախ աստղը: Բայց մի օր, ճաշից յետոյ,

երկնքի վրայ երևացին թանձր ու գորշ ամպեր, այս ու այն կողմը պէծպէծին տուին կուրացնող փայլակները և յանկարծ որոտացին սարսափելի ամպի գոռոցներ, որ սարերին զիպչելով՝ նորից արձագանք տուին և կրկնապատկեցին որոտումները. մի սարսափելի փոթորիկ վեր կացաւ: Բոլորովին մթնեց. անձրևը թակում էր խրճթի դուռն ու պատերը և սարերի միջով անցնում էր որոտումը՝ սարսափելի արձագանք տալով. պէծպէծին տուող փայլակները լուսաւորում էին այն սև ու երկիւղալի հսկայ կերպարանքները, որոնք ուրուականների նման կարծես աւելի մօտենում էին և աւելի սպառնալի հայեացքով ցած նայում: Արջառներն այս ու այն կողմն էին վազում վախեցած և բարձրաձայն բառաչում. մեծ գիշակեր թռչուններն էլ օդի մէջ թևածելով անախորժ ձայներ էին արձակում:

Թուռնին վաղուց արդէն իր խրճիթումն էր, բայց փայլակներն այդտեղ էլ լուսաւորեցին այն սարսափելի կերպարանքները, իսկ ասէղաձայն որոտումները կարծես իւրաքանչիւր ընկած ուղում էին խրճիթը գետնի մէջ խրել. Թուռնին երկիւղից հազիւ կարողանում էր շունչ քաշել: Նա փաթաթուել էր սեղանին և այդպէս ամեն ընկած սպասում էր, որ

տուռնը կ'քանդուի և իրեն էլ կ'ճխլտի: Փոթորիկը ժամեր տևեց և ծառան էլ ցած չեկաւ: Արդէն իսկական գիշեր էր, բայց կուրացնող փայլակները դարձեալ պէծպէծին էին տալիս, դարձեալ որոտումներ էին լսում և խրճթի շուրջը սուլում ու մռնչում էր մրրիկը:

Թուռնին գիշերուայ կէսն անցկացրեց անշարժ և սեղանին փաթաթուած դրութեամբ. նա այլ ևս չէր մտածում. ամեն բան ոչնչացնող սարսափելի զօրութեան զգացմունքն էր միայն տիրում նրան: Թէ ինչպէս էր անկողին մտել, ինքն էլ չ'գիտէր. առաւօտեան պառկած էր խոտի անկողնի լայնութեամբ և այնպէս ջարդուած էր, որ հազիւ կարողացաւ տեղից վեր կենալ: Երկիւղով պատուհանից դուրս նայեց՝ տեսնելու թէ արդեօք այդ սարսափելի գիշերն անցնելուց յետոյ ի՞նչպէս է այնտեղ. յետոյ դուրս գնաց կովերին նայելու: Գետինը դեռ թաց էր, տաւարը հանգիստ արածում էր: Երկինքը գորշ գոյն ունէր և թանձր ու սև ամպերով ծածկուած: Բարձր սարերը խաւարով պատած ու երկիւղալի էին երևում. դրանք աւելի մօտեցել էին և սպառնալի հայեացք էին ձգում Թուռնիի վրայ. նա յետ փախաւ ու խրճիթը մտաւ:

Միմեանց ետևից շարունակ փոթորկալի օրեր էին. եթէ մի մի անգամ արևը դուրս էր գալիս, կիզում էր անտանելի կերպով և նորից սկսում էին փոթորիկներն՝ այնպէս կատաղի կերպով ու շարունակաբար, որ վերին Ալպի վրայ եղող անդէորդը-յաճախ ասում էր, թէ շատ տարիներից հետէ այդպիսի ամառ չէ տեսել և եթէ եղանակը չ'փոխուի, անցեալ տարուայ ստացած իւղի կէսն էլ չի ստանայ այս տարի, որովհետև կովերը կաթ չէին տալիս, խոտը համ չէր տալիս նրանց: Այդ ժամանակի ընթացքում ծառան ամենայաջող վայրկեանին շտապով իջնում էր փոքրիկ Ալպը, կարելի եղածին չափ շուտով կթում էր կովերը և առանց տղային տեսնելու վերադառնում էր. միայն երբեմն, երբեմն, մտածելով որ Թունին էլ կաթը չի ունենայ, շուտով կուժը դուրս էր բերում, լցնում կաթով և նորից տեղը դնում: Յետոյ նա յաճախ տեսնում էր Թունիին իր խոտի անկողնի վրայ նստած և ասում. «Տոյլ տղայ ես». բայց շուտով կրկին դուրս էր վազում, որ առանց զբոսնելու տուն հասնի և այլ ևս չէր մտածում նրա մասին: Այսպէս անցաւ յունիսը և նոյն իսկ յուլիսի մի մասը: Փոթորիկներն այժմ յաճախ չէին կրկնում, բայց թանձր մառախուղն այնպէս

էր ծածկել Ալպը, որ երկու քայլի վրայ երբեմն ոչինչ չէր երևում: Երբեմն արջառնեքը մոլորում և այնքան հեռու էին գնում, որ ծառան նրանց երկու Ալպերի մէջ եղած հովտում գտնելով նորից վերև էր բերում: Այս բանի վրայ նեղացած՝ ծառան մի անգամ ձայն տուեց Թունիին, բայց պատասխան չստացաւ: Նա վազեց դէպի խրճիթը և ներս մտաւ: Թունին կձկուած նստած էր անկողնի մի անկիւնում և աչքերը սևեռել էր:

«Ինչո՞ւ կովերը լաւ չես պահպանում», հարցրեց ծառան, բայց պատասխան չստացաւ: «Ձես կարող խօսել, ի՞նչ է պատահել քեզ»:

Պատասխան չկար:

Ծառան սկզբումը կարծեց թէ Թունին հաց ու պանիրը վերջացնելով՝ քաղցած է մնացել, բայց հացի կէսն ու պանրի մեծ մասը դեռ այնտեղ էր դրուած. Թունին համարեա՞ թէ միայն կաթն էր խմել:

«Ի՞նչդ է ցաւում, հիւանդ ես», հարցրեց կրկին ծառան:

Թունին պատասխան չէր տալիս. կարծես ոչինչ չէր լսում և այնպէս անշարժ սևեռել էր աչքերը, որ ծառան վախեցաւ ու դուրս վազեց: Միւս Ալպի վրայ նա պատմեց

անդէորդին տղայի վիճակը և երկուսով վրճ-
ռեցին, որ գիւղն իւր ուղարկելիս այդ մասին
տեղեկութիւն տան ագարակատէր գիւղացուն:

Մի շաբաթից յետոյ այդ տեղեկութիւնը
հասաւ գիւղացուն. բայց նա ենթադրեց, որ
Թունին նորից կ'բացուի, երևի, ասաց, սաս-
տիկ փոթորիկները նրան մի փոքր վախեցրել
են: Բայց միևնոյն ժամանակ ապսպրեց, որ
անդէորդն ինքը գնայ տեսնի տղային, որով-
հետև ինքն էլ երեխաներ ունի և ծառայից
աւելի լաւ է հասկանում ու եթէ տեսնի որ
լաւ չէ նրա դրութիւնը, գիւղը բերի: Մի քա-
նի օրից յետոյ անդէորդը, ճիշտ որ իր տղա-
ներից մէկին հետն առած, գնաց փոքր Ալպ:

Նա Թունիին նոյն դրութեան մէջ գը-
տաւ, ինչպէս որ տեսել էր ծառան. ինչ որ
ասաց անդէորդը՝ Թունին ոչ մի ծպտուն
չ'հանեց, տեղից չշարժուեց և աչքերը շարու-
նակ նոյն կէտի վրայ ունէր լառած:

«Նրան պէտքէ գիւղ ուղարկել», ասաց
անդէորդն իր տղային, «գու հետը գնայ, բայց
զգոյշ եղիւր, որ ոչինչ չպատահի նրան, հետը
լաւ վարուիր, պէտք է խղճալ այդ երեխային».
Նա ցաւակցում էր Թունիին, որովհետև բա-
րեւիտ մարդ էր և սիրում էր իր երեք մեծ
ու առողջ տղաներին: Իր հետ եղողը մի

ամրակազմ ու քաջ պատանի էր—տասնուվեց
տարեկան: Նա մօտեցաւ Թունիին և ասաց,
որ վեր կենայ, բայց վերջինս տեղից չը-
շարժուեց. տղան բռնեց նրա թևերի տակից,
փետուրի նման վերև բարձրացրեց նրան, շա-
լակեց, երկու ձեռքով պինդ բռնեց և Ալպից
ցած իջաւ այդ թեթև բռով:

Ագարակատէր գիւղացին տեսնելով որ
Թունիի դրութիւնը չէ փոխուում, վախեցաւ.
Նա այդպիսի բան չէր սպասում: Նա չգիտէր
թէ ինչ անէ երեխային. մայրը հեռու էր.
ազգականներ չկային. իսկ այդ դրութեամբ
Թունիին իր մօտ պահել էլ չէր ուզում և
վախենում էր պատասխանատուութիւնից: Յան-
կարճ մի լաւ միտք յղացաւ նա—նոյնն էին
անում այնտեղ բոլորը՝ տագնապի, կարիքի ու
նեղութեան ժամանակ—«տար դրան քահա-
նայի մօտ»— ասաց նա անդէորդի տղային,
«նա կ'օգնի». Պատանին նորից ճանապարհ ըն-
կաւ և իսկոյն գնաց քահանայի մօտ: Քահա-
նան պատմել տուեց այն բոլորը, ինչ որ գի-
տէր պատանին Թունիի մասին. թէ ինչպէս
է նա այդ դրութեան մէջ ընկել և քանի ժա-
մանակ է. բայց պատանին ինքն էլ շատ քիչ
բան գիտէր այդ մասին: Քահանան առաջ ա-
մեն կերպ փորձեց Թունիին խօսեցնելու, հարց-

րեց թէ կամնո՞ւմ է մօրը տեսնել, բայց բո-
լորը զուր անցաւ. Թունին ոչ մի նշանով չ'ցոյց
տուեց թէ հասկանում է նրա ասածները:

Քահանան նստեց գրասեղանի առաջ, մի
նամակ գրեց ու ասաց սնդէորդի տղային.
«յետ զնա ագարակատէր գիւղացու մօտ և ա-
սա նրան, որ իր կառքը լծել տայ ու ինձ
ուղարկի. ես կ'հոգամ, որ հէնց այսօր Թու-
նին Բերն գնայ. նա ծանր հիւանդ է. այդ-
պէս ասա՛ գիւղացուն»։ Գիւղացին լսելով պա-
տանու խօսքերը, ուրախացաւ որ այդպէս
հեշտ է պրծնում և միայն մինչև երկաթու-
ղու կայարանը պէտքէ տանի Թունիին. նա
խսկոյն լծել տուեց կառքը: Քահանան մի ծեր
ու բարի լուսարար ունէր, որ շատ տարինե-
րից ի վեր կատարում էր նրա պատասխանա-
տու յանձնարարութիւնները. այժմ նոյն լու-
սարարին պատուիրեց քահանան՝ մեծ հողացո-
ղութեամբ ու զգուշութեամբ տանել Թունիին
Բերն քաղաքի մեծ հիւանդանոցը և մի
նամակի հետ միասին յանձնել այնտեղ ծա-
ռայող բժշկին, որ քահանայի լաւ ծանօթն
էր: Կէս ժամից յետոյ մի բաց կառք՝ կանգնեց
քահանայի տան առաջը: Լուսարարը տեղաւո-
րուեց նրա մէջ, իր կողքին նստեցրեց հի-
ւանդ տղային և պինդ բռնեց նրան: Թունին

իր կեանքում առաջին անգամն էր կառք
նստում, բայց այնուամենայնիւ նա նստած
էր լուռ ու մունջ և կարծես թէ արտաքին
աշխարհից այլ ևս ոչինչ չէր զգում:



ԳԼՈՒԽ Դ.

Հ Ի Ի Ա Ն Դ Ա Ն Ո Ց Ո Ւ Մ



յդ երեկոյեան հիւանդանոցի բժիշկն իր ընտանիքի հետ միասին նրստած էր սեղանի շուրջը և ուրախ խօսում. նոյն իսկ այն ժենեցի տիկինը, որ օրական մի քանի ժամ այդ ընտա-

նիքի հետ ժամանակ էր անցկացնում, այսօր կարծես վարակուել էր երեխաների աշխուժութիւնից. նա երբէք այնպէս եռանդով չէր մասնակցել դպրոց յաճախող մանուկներին վերաբերեալ խնդիրների վիճաբանութեանը, ինչպէս այսօր:

Շատ ժամանակ չէր անցել այն օրից,

երբ վախճանուեց այդ տիկնոջ սիրելի ու շնորհալի զաւակը. այդ կորուստն այնքան ցաւ պատճառեց նրան, որ հիւանդացաւ և այժմ բժշկուում էր հիւանդանոցում:

Իրանց աշխոյժ զրուցատրութիւնն ընդհատուեց, երբ յանկարծ բժշկին մի նամակ տուին:

«Նամակագիրը ծանօթներիցս մէկն է, որ մի հիւանդ է ուղարկել: Հիւանդը մեր Մաքսի հասակակից մի պատանի է — հայկարդն», ասաց բժիշկը և նամակը տուեց իր ամուսնուն:

«Մ. խ, խեղճ տղայ», աղաղակեց կինը, «այստեղ է նա, բեր մեզ մօտ, գուցէ երեխաներին տեսնելը լաւ ազդեցութիւն ունենայ նրա վրայ:

«Կարծեմ այստեղ պէտք է լինի», ասաց բժիշկը, դուրս գնաց և շուտով յետ եկաւ լուսարարի ու Թուենիի հետ միասին: Առաջինին նա քաշեց դէպի մի պատուհան և սկսեց խօսել նրա հետ կիսաձայն: Այդ միջոցին տանտիկինը մօտեցաւ Թուենիին, որ ներս մտնելուն պէս կծկուել էր մի անկիւնում: Տիկինը բարեկամաբար սկսեց խօսել նրա հետ և հրաւիրեց նրան մօտենալ սեղանին ու երեխայոց հետ մի բան ուտել: Թուենին տեղից

չ'շարժուեց: Այդ միջոցին աթոռից վեր թռաւ փոքրիկ, համարձակ Մարին և մի մեծ իւղահաց ձեռին բռնած մօտեցաւ Թուռնիին. «ահա, մի պատառ կծիր» ասաց նա խրախուսելով:

Թուռնին անշարժ մնաց:

«Տես, այսպէս պէտք է անես». ասաց փոքրիկը, մի մեծ պատառ կծեց հացից և նորից աւելի մօտեցրեց նրան: Բայց նա աչքերը սևեռել էր և ոչ մի շարժողութիւն չէր անում: Այս անխօս ընդդիմութիւնը փոքրիկ Մարիին վատ թուաց. նա կամաց յետ քաշուեց:

Այժմ բժիշկը մօտեցաւ, բռնեց Թուռնիի ձեռքը և լուսարարի հետ միասին սենեակից դուրս գնաց:

Խեղճ Թուռնիի երևալը մեծ ազդեցութիւն ունեցաւ երեխայոց վրայ. նրանք բոլորն էլ լռել էին: Երբ երեխաներն անկողին մտան ու երկու տիկիները մենակ էին մնացել, բժիշկը յետ եկաւ: Երկու տիկիները ստիպողական հարցումներից յետոյ միայն նա պատմեց բոլորը, ինչ որ լուսարարը հաղորդել էր Թուռնիի հիւանդութեան մասին. նա հաղորդեց նոյնպէս՝ թէ ինչպէս սիրով ապրելիս է եղել Թուռնին իր մօր հետ և թէ առաջ Թուռնին երբէք տկար չէ եղել. միայն թէ սկզբից նա

հանդարտ, հեզ ու քնքոյշ կազմուածքի տէր երեխայ է եղել:

Տիկիները հարցրին՝ թէ ինչպէս է պատահել, որ նա ամառը, սիրուն Ալպի վրայ այդ դրութեան մէջ է ընկել: Բժիշկը բացատրեց, որ այդ այնքան էլ անհասկանալի չէ, եթէ ի նկատի ունենաւք թէ որքան սարսափելի է լինում մրրիկը բարձր սարերի վրայ. բացի դրանից՝ երեխան քնքոյշ կազմուածք ունի, բոլորովին մենակ է եղել և ամբողջ շաբաթներ, մինչև անգամ ամիսներ մարդկային խօսք չէ լսել. այդպիսի սարսափելի միայնութեան մէջ և երկիւղից երեխան կարող էր բոլորովին անզգայանալ:

Ժենևեցի տիկինը, որ սաստիկ ցաւակցում էի Թուռնիին, զայրացած ասաց.

«Ի՛նչպէս կարող է մի մայր թոյլ տալ, որ իր երեխային այդպիսի բաներ պատահեն. այդ անհասկանալի է»:

«Հարկաւ դուք չէք էլ կարող կասկածել», պատասխանեց բժիշկը, աշխատելով մեղմացնել նրան, «թէ չքաւոր մայրերն յաճախ ինչեր են թոյլ տալիս իրենց մանկանց. միայն մի կարծէք թէ այդ աւելի քիչ ցաւ է պատճառում նրանց, քան թէ ուրիշներին: Դուք տեսնում էք թէ որքան բան թշուառութիւն

է պատճառում, որ մեզ բոլորովին անյայտ կարող է լինել. և թէ ի՞նչպէս է ճնշում չքաւորութիւնը»:

«Կարելի՞ է արդեօք խեղճ տղային բժըշկել», հարցրեց բժշկի ամուսինը:

«Այո՛, եթէ միայն կարողանամ նրա մէջ բուռն յուզմունք առաջացնել. այժմ ամեն բան կեանքից զուրկ ու անզգայ է նրա հոգեկան աշխարհում»:

«Ա՛խ, օգնեցէք նրան, օգնեցէք նրան», աղաչում էր հիւանդ տիկինը. «երանի՛ թէ մի բան կարողանայի անել նրա համար». ասում էր տիկինը յուզուած, ման էր գալիս սենեակում և օգնութեան միջոցների մասին մտածում. Թունիի վիճակը խորը թափանցեց նրա սիրտը:

Երբ Թունին հիւանդանոց եկաւ, օգոստոսի երկրորդ շաբաթն էր: Անցան օրեր ու շաբաթներ, բայց բժիշկը, որ ամեն առաւօտ տեղեկութիւն էր տալիս տիկիններին, միշտ միևնոյն տխուր լուրն էր ասում Թունիի մասին. ամենափոքրիկ փոփոխութիւն սնգամ չէր նկատուում: Ամեն միջոց գործ դրին նրան զուարճացնելու, որ գոնէ կարողանայ ծիծաղել. ամեն միջոց գործ դրին նրան զթաշարժելու, որ գոնէ կարողանայ լաց լինել. նրա

ուշադրութիւնը գրաւելու համար ամեն արհեստ բանեցրին, սակայն բոլորն իզուր անցաւ. Թունին ամենափոքրիկ շարժողութիւն անգամ չարեց: «Երանի՛ թէ կարելի լինէր մի անգամ նրան ծիծաղեցնել կամ լացեցնել», կրկնում էր անդադար բժիշկը: Բայց չորս շաբաթ էր արդէն, որ Թունին հիւանդանոցումն էր. բժշկի յոյսը կտրուում էր. նա ամեն միջոց փորձել էր, սակայն ոչինչ հետեւանքի չէր հասել:

«Մի բան էլ պէտք է փորձեմ», ասաց բժիշկը մի առաւօտ իր կնոջը, «իմ բարեկամ քահանային նամակ գրեցի ու հարցրի թէ արդեօք երեսան շատ էր սիրում մօրը. եթէ այո՛, խնդրեցի որ այս օրերս նրան մեզ մօտ ուղարկի. գուցէ սիրելի մօր տեսութիւնը ներգործէ նրա վրայ»:

Այդ օրից տիկինները մեծ հետաքրքրութեամբ սպասում էին Եղսիի գալուն:

Սեպտեմբեր ամսի առաջին շաբաթն Ինտերլակէնի հիւրանոցի մնացած հիւրերն էլ գնացին. Եղսին էլ վերջացնելով իր ծառայութեան ժամանակամիջոցը, շուտով ճանապարհ ընկաւ դէպի տուն, որովհետեւ ցանկանում էր տանն ամեն բան կարգի դնել՝ մինչև Թունին Ալպից գած գար: Նա կարծում էր թէ տղան

այնտեղ է և ոչինչ տեղեկութիւն չունէր պատահած դէպքից: Երբ տուն հասաւ, իսկոյն գնաց ագարակատէր գիւղացու մօտ՝ Թունիի մասին տեղեկանալու և իր այժը տուն տանելու: Գիւղացին բարեկամաբար ընդունեց նրան և ասաց, որ այժը բաւականին չաղացել ու գեղեցկացել է՝ այսքան երկար ժամանակ լաւ խոտ ուտելով: Բայց երբ Եղսին Թունիի մասին հարցրեց, նա կտրճ կտրեց ու ասաց, որ ինքն այժմ շատ զորճ ունի անելու, թող գնա քահանայի մօտ, նա աւելի լաւ զիտէ տղայի զրուսթիւնը: Եղսին մի փոքր տարօրինակ թուաց թէ ինչո՞ւ քահանան աւելի լաւ պէտք է իմանայ Ալպի բանը. այժը տուն տանելիս նա մտածում էր այդ մասին և հետըզհետէ նրա մէջ երկիւղի զգացմունք առաջացաւ: Նուն հասնելուն պէս այժը կապեց և առանց խրճիթը մտնելու, նորից նոյն ճանապարհով յետ վազեց մինչև Կանդերգրունդ:

Քահանան մեծ զգուշութեամբ պատմեց նրան՝ թէ Ալպի վրայ անցկացրած կեանքը վրայ չգայով Թունիին, հիւանդացել էր և ինքը տեսնելով՝ որ տղան լաւ բժշկի ու խընամբի կարիք ունի, անմիջապէս ուղարկել է Բերն:

Մայրը սաստիկ վախեցաւ և ուզում էր

հէնց յաջորդ օրը ճանապարհ ընկնել՝ իր որդուն տեսնելու:

Բայց քահանան թոյլ չտուեց՝ ասելով թէ պէտք է սպասէ, մինչև որ բժիշկը թոյլ տայ այցելելու հիւանդին. միևնոյն ժամանակ ապահովացրեց նրան՝ ասելով թէ Թունիին մեծ խնամքով են պահում այնտեղ:

Եղսին վշտացած սրտով յետ գնաց իր խրճիթը: Նա ոչինչ չէր կարող անել, բացի ամեն բան Աստուծոյ կամքին թողնելուց: Նա էր միայն իր միակ մխիթարութիւնն այսքան երկար ժամանակ:

Սակայն հազիւ մի քանի օր անցնելուց յետոյ՝ քահանան ապսպրեց նրան, որ շուտով Բերն գնայ. բժիշկն է ցանկանում այդ:

Յաջորդ օրն առաւօտեան վաղ Եղսին ճանապարհ ընկաւ, ճաշուայ ժամին հասաւ Բերն և շուտով արդէն կանգնած էր հիւանդանոցի դրան առաջը:

Եղսին առաջնորդեցին դէպի բժշկի բնակարանը, որտեղ նրան բարեկամաբար ու մեծ կարեկցութեամբ ընդունեցին բժշկի կիներն ու մանաւանդ Փենեցի տիկինը: Վերջինս այնքան հետաքրքրուել էր խեղճ Թունիի և նրա մօր պատմութեամբ, որ շարունակ այն էր մտածում՝ թէ ինչպէս պէտք է օգնել նրանց. չէ՞ որ

ինքն էլ իր միակ զաւակը կորցրել էր և լաւ էր հասկանում մօր վիճակը: Նա խնդրեց բըժշկին, որ թոյլ տայ իրեն ներկայ լինելու այն տեսարանին, երբ Թունին առաջին անգամ պէտք է տեսնէր մօրը, որ եթէ, ինչպէս ըստ սովոր էին, մօրը տեսնելով երեխան ուշքի գայ՝ ինքն էլ ուրախանայ: Շուտով եկաւ և բժիշկը, նախապատրաստեց մօրը, որ Թունին առաջին վայրկեանին չի խօսի, և ապա թէ ներս բերեց տղային: Բժիշկը Թունիի ձեռքը բռնած ներս բերեց սենեակը, յետոյ թողեց նրան ու մի կողմը քաշուեց:

Մայրը վազեց դէպ իր զաւակը և ուզում էր նրա ձեռքը բռնել. բայց նա ձեռքը յետ քաշեց, կծկուեց մի անկիւնում և աչքերը սևեռեց դատարկ տարածութեան մէջ:

Տիկիններն ու բժիշկը տխուր հայեացք ձգեցին միմեանց վրայ:

Մայրը մօտեցաւ նրան ու փաղաքշուծ էր. «Թունիկ, Թունիկ», կրկնում էր նա շարունակ գորովալի ձայնով. «չէս ճանաչում ինձ, էլ մօրդ չէս ճանաչում»:

Բայց Թունին, ինչպէս միշտ, այժմ էլ կպաւ պատին, տեղից չշարժուեց ու աչքերը յառեց:

Մօր քնքոյշ ձայները հետզհետէ ողբի

փոխուեցան, «Ա՛խ, Թունիկ, ասա՛ ինձ միայն մի խօսք. միայն մի անգամ նայիր ինձ, Թունիկ, բոլորովին չէս լսում ինձ»:

Թունին անշարժ մնաց:

Մի անգամ էլ նայեց նրան մայրը գորովալի հայեացքով, բայց հանդիպեց նրա սեւեռած ու անկենդան աչքերին: Այդ արդէն չափազանց էր խեղճ եղսիի համար. նրա միակ հարստութիւնը, որ ունէր այս աշխարհում, և որին հոգով սրտով սիրում էր, նրա սիրելի Թունին պէտքէ այսպիսի թշուառ դրուժեան մէջ լինէր: Նա մոռացաւ բոլորը, ինչ որ իր շուրջը կար, իր երեխայի կողքին ծնկաչոք եղաւ, և աչքերից արտասուքի հեղեղներ թափելով ու սրտի կսկծից սկսեց բարձրաձայն աղօթել:

Թունիի աչքերն արտայայտութիւն ստացան. նա նայեց մօրը: Մայրը չտեսաւ այդ և արցունք թափելով շարունակում էր խընդրել:

Յանկարծ Թունին մօր գիրկն ընկաւ և սկսեց բարձր ձայնով հեկեկալ: Մայրը գրկեց որդուն և նրա կսկծալի արցունքները դարձան ուրախութեան հեկեկանք. որդին էլ էր հեկեկում:

«Յաջողուեց», ասաց ուրախացած բժիշկը

տիկիններին, որ խորը զգացուած նայում էին մօրը և որդուն:

Յետոյ բժիշկը բաց արեց կողքի սենեակը և Եղսիին նշան արեց, որ Թունիի հետ այն սենեակը մտնի. նա լաւ համարեց, որ մի առ ժամանակ երկուսը մենակ մնան: Սենեակում, մի փոքր ժամանակ անցնելուց յետոյ, Թունին սկսեց մօր հետ խօսել բնական կերպով ու հարցրեց. էլի մեր քարախրճիթը կերթանք. ես հօ էլ Ալպ չեմ գնալու:»

Մայրը հանգստացրեց նրան՝ ասելով որ շուտով միասին տուն կերթան և էլ չեն բաժանուի միմեանցից: Շուտով Թունիի միտքը բոլորովին պարզուեց. մի վայրկեան լուելուց յետոյ նա ասաց. «բայց ես մի բան պէտքէ աշխատեմ, մայրիկ»:

«Այդ մասին մի մտածի», հանգստացրեց նրան Եղսին, «երբ ժամանակը գայ, Աստուած մի ճանապարհ ցոյց կ'տայ»:

Յետոյ մայրն սկսեց պատմել այժի մասին՝ թէ ինչպէս չաղացել ու գեղեցկացել է. Թունին հետզհետէ կենդանացաւ:

Մի ժամ անցնելուց յետոյ բժիշկն երկուսին էլ ներս տարաւ իր սենեակը, ուր սպասում էին երկու տիկինները: Թունին բոլորովին փոխուել էր, նրա աչքերը լուրջ, բայց խոհուն

արտայայտութիւն ունէին: Ժենեցի տիկնոջ ուրախութիւնն աննկարագրելի էր. նա խսկոյն նստեց Թունիի մօտ և պատմել տուեց թէ որ ուսումնարանումն է սովորել և ինչ է սովորել:

Իսկ բժիշկը նշանացի կերպով իր մօտ կանչեց Եղսիին:

«Լսեցէք, տիկին», ասաց նա, «ձեր երգը խորին ու յուզիչ տպաւորութիւն արաւ երեխայի սրտի վրայ. այդ երգը ծանօթ էր նրան»:

«Ախ, Աստուած», աղաղակեց Եղսին, «հարիւր ու հազար անգամ նոյնը երգել եմ նրա անկողնի մօտ, երբ նա փոքր էր. երգելիս շատ անգամ լաց եմ եղել և նա էլ հետս լաց է եղել՝ թէև դեռ չգիտէր թէ ինչու համար»:

«Նա լալիս էր, որովհետև դժբ էիք լալիս, նա վշտանում էր, որովհետև դժբ էիք վշտանում», ասաց բժիշկը: Այժմ հասկանալի է, որ նա այդ հնչիւնների շնորհիւ ուշքի եկաւ: Արդէն մանկական հասակում այդպիսի տպաւորութիւններ ստանալով՝ զարմանալի չէ, որ նա հանդարտ ու մտածող պատանի դարձաւ:

Պատահած դէպքից այժմ շատ բան պարզուում է»:

Այդ միջոցին մօտեցաւ ժենեցի տիկինը և ուզում էր անպատճառ խօսել Եղսիի հետ: «Սիրելի, բարի տիկին, այլ ևս թոյլ չ'տաք, որ նա կրկին Ալպ գնայ, նա յարմար չէ այդ պաշտօնին», ասաց նա եռանդով. «մի ուրիշ պարապմունք կ'գտնենք նրա համար. արդեօք ուրիշ մի որ և է արհեստի սէր չէ՞ ունեցել նա. բայց թեթեւ արհեստ պէտք է լինի, որովհետև ծանր աշխատանքին նրա ուժերը չեն պատի»:

«Ա՛խ, այո՛, արդէն մանկութիւնից նա մեծ ցանկութիւն ունէր մի արհեստ սովորելու, բայց ես չեմ համարձակուում ասել»:

«Ինչո՛ւ, բարի տիկին, իսկոյն ասացէք», խրախուսում էր ժենեցի տիկինը և չ'սուած բան էր սպասում:

«Նա մեծ սիրով ուզում է փայտ քանդակող դռնալ և բաւականին էլ շնորհք ունի դրա համար, բայց սովորելու և այդ միջոցին ապրելու համար կարևոր փողն ութսուն ֆրանկից աւելի է անում»:

«Ա՛յդ է բոլորը». աղաղակեց տիկինը մեծ զարմանքով, «այդ է բոլորը, արի՛ ինձ մօտ, Թունի», ասաց և ինքը վազեց նրա մօտ. «ճիշտ է, որ ամենից մեծ սիրով քանդակագործութիւն կ'սովորես»:

Թունիի աչքերն ուրախութիւնից այնպէս փայլեցին «այո՛» ասելիս, որ տիկինն ամեն բան հասկացաւ: Նա այնպիսի մի պահանջ էր զգում Թունիին բարութիւն անելու, որ մեծ սիրով հէնց նոյն ժամին ուզում էր գործն սկսել: «Կուզենայի՞ր հէնց այժմ մի վարպետի մօտ գնալ և սովորել այդ արհեստը», հարցրեց նա:

Թունին ուրախութեամբ դրական պատասխան տուեց:

Բայց տիկինը մի բան մտաբերեց և դիմեց բժշկին. «գուցէ կարևոր է, որ առ այժմ նա հանգստանայ»:

Բժիշկը պատասխանեց, որ ինքն արդէն մտածել է այդ մասին. Եղսին ասել է իրեն, որ Փրուտիգէն գիւղում մի լաւ վարպետ քանդակագործ կայ. «փայտ քանդակելն այնքան էլ ծանր աշխատութիւն չէ պահանջում, շարունակեց նա, իսկ Թունիի համար ամենից գլխաւորն այն է՝ որ մի առ ժամանակ լաւ ու սննդարար կերակուր ունենայ: Փրուտիգէնում լաւ հիւրանոց կայ, եթէ միայն—»:

«Այդ ես եմ յանձն առնում, պարոն բրժիշկ, յանձն եմ առնում», ընդմիջեց նրան տիկինը. «ես հետը կ'երթամ, վաղը ճանապարհ կ'ընկնենք: Փրուտիգէնում ես Թունիի սենեա-

կի, սննդի և նրան կարևոր բոլոր պէտքերի համար կ'հոգամ»: Տիկինն ուրախութիւնից մի քանի անգամ սեղմեց Եղսիի ու պատանու ձեռքերը և դուրս գնաց՝ ճանապարհի պատրաստութիւնները տեսնելու:

Երբ մայր ու որդուն էլ մի ուրիշ սենեակ տարան, բժիշկը մեծ ուրախութիւն գգալով ասաց իր կնոջը. «Երկուսն էլ առողջ են այժմ. մեր տիկինն էլ բժշկուեց. մի նոր հետաքրքրութիւն զարթեց նրա մէջ. դու կը տեսնես, որ Թունիի համար տաճած հոգացողութիւնը նրան կ'կենդանացնէ նորից: Այսօր շատ սիրուն օր էր մեզ համար»:

Յաջորդ օրը, առաւօտեան, մեր ճանապարհորդներն ուղևորուեցին դէպի Փրուտի-գէն. այս փոքրիկ ընկերութեան անդամներն այնքան ուրախ ու երջանիկ էին, որ իրենք էլ չիմացան թէ ի՞նչպէս տեղ հասան: Գնացին քանդակագործ վարպետի մօտ և տիկինը խնդրեց ասել իրեն՝ թէ ի՞նչ գործիքներ կարևոր են Թունիին՝ այդ արհեստի համար. վարպետն ամեն տեսակ գործիքներ ցոյց տալուց յետոյ ասաց՝ թէ լաւ կ'լինի որ նա մի գեղեցիկ պատկերազարդ գիրք էլ ունենայ և քանդակելիս այդ նկարներից օրինակ վերցնի: Տիկինը յանձնարարեց վարպետին՝ սովորեց-

նել Թունիին այն ամենը, ինչ որ ապագայում պէտք կ'գայ նրան իր արհեստը բանեցնելիս. յետոյ ամենքը գնացին հիւրանոց: Այդտեղ տիկինը Թունիի համար մի լաւ սենեակ վարձեց՝ յարմար անկողնով և ինքն անձամբ հիւրանոցի տիրոջ հետ կազմեց շաբաթուայ ընթացքում Թունիի ստանալիք ամենօրեայ կերակուրների ցանկը: Հիւրանոցի տէրը, շարունակ գլուխ տալով, խոստացաւ ամեն բան ճշտիւ կատարել, որովհետև լաւ տեսնում էր թէ ո՞ւմ հետ գործ ունի:

Յետոյ Տիկինը, Եղսին ու Թունին միասին ճաշի նստեցին. ճաշելիս տիկինն ասաց. «Ես շուտով կերթամ Ժենև, այնտեղ մեծ խանութներ կան, ուր շատ փայտից քանդակագործուած իրեղէններ են վաճառում. ես կը միջնորդեմ այնտեղ, որ Թունիի պատրաստած բոլոր իրեղէններն առնեն ու ծախեն. թո՛ղ ուրեմն եռանդով ու սիրով աշխատի»: Նա պահանջեց նույնպէս, որ Թունին ոչ թէ երկու, այլ երեք ամիս մնայ վարպետի մօտ, որ ամեն բան հիմնովին սովորի. «Թունին կարող է կիրակի օրերը քեզ այցելել կամ թէ դու կ'գաս նրա մօտ», ասաց տիկինն Եղսիին: Եղսին ու Թունին չգիտէին թէ իրենց շնորհակալութիւնն ի՞նչպէս արտայայտեն. խօսք

չէին գտնում դրա համար, բայց տիկինը հասկացաւ նրանց և ուրախ սրտով հեռացաւ նրանցից. նա երկար ժամանակ այդպիսի ուրախութիւն չէր զգացել:

Ինչպէս որ բժիշկը գուշակել էր, այնպէս էլ եղաւ. այն տիկինը, որ այլ ևս իր ծննդավայրի մասին չէր կարողանում և չէր ուզում մտածել, այժմ փափագում էր ծէնէ վերադառնալ. նա այնքան ծրագիրներ ունէր այնտեղ իրագործելու, որ անհամբեր սպասում էր ճանապարհ ընկնելու վայրկեանին:

Բժիշկը ցնծութեամբ թոյլ տուեց նրան ծէնէ վերադառնալու: Թունին վարպետի մօտ գործ սկսելուն պէս այնպիսի եռանդ ու շնորհք ցոյց տուեց, որ վարպետն երեքշաբաթ անցնելուց յետոյ արդէն ասաց իր կնոջը. «Եթէ Թունին այսպէս շարունակի, ինչնից ակելի լաւ կսովորի»:

Երեք ամիսն անցաւ. մօտենում էր ծննդեան տօնը: Մի առաւօտ խորը ձիւնի մէջ թաղուելով՝ դէպի իրենց գիւղն էր գնում Թունին: Նա թարմ ու առողջ արտայայտութիւն ունէր և սիրտն այնպէս լցուած էր ուրախութեամբ, որ շարունակ երգում էր:

Բայց երբ հեռուից յանկարծ նկատեց իրենց քարախրճիթն ու թանձր ձիւնով ծած-


կուած եղևնին՝ ուրախութեան արտասուքներ փայլեցին նրա աչքերում. նա գալիս էր տուն, մօր մօտ: Թունին վազեց դէպի խրճիթը և մայրն էլ նրան նկատելով՝ դուրս վազեց խրճիթից: Թէ այդ երկուսից ո՞վ ակելի ցնծաց, ոչ ոք չի կարող իմանալ. միայն թէ երկուսն էլ այնպէս երջանիկ էին, որ կրկին միմեանց կողքին նստած են իրանց խրճիթում, որ երկրիս վրայ նրանք ակելի մեծ բաղտաւորութիւն չէին կարող երազել: Նրանց ամենամեծ ցանկութիւնները կատարուած էին. Թունին քանդակագործ էր և կարող էր իր արհեստով զբաղուել տանը, մօր մօտ: Բացի դրանից՝ ինչպիսի օրհնութիւն էր ուղարկել դրանց Սատուած. ծէնէից այնքան բարութիւն էին անում Եղսիին, որ նա այլ ևս մեծ հոգսեր չէր ունենալու. ամեն անգամ գրում էին այնտեղից, թէ ուրախութեամբ ընդունում են Թունիի պատրաստած փայտեայ իրեղէնները: Երկու օրից յետոյ ծննդեան տօնը նրանք այնպէս շքեղ անցկացրին, որ ոչ Եղսին և ոչ Թունին իրանց կեանքում չէին տեսել. տօնածառի մոմերը լուսաւորեցին ո՞չ միայն այն բազմաթիւ իրերը, որ ստացուել էին Թունիի հազուատների համար, այլ և մի ամբողջ ժողովածու քանդակելու ընտիր դասակների և

մի այնպիսի մեծ ու գեղեցիկ պատկերազարդ
գիրք, որ Թուսին երբէք չէր տեսել. իր վար-
պետի ունեցած գիրքը սրա համեմատութեամբ՝
մի խաղալիք էր: Եղսիի համար նոյնպէս հո-
գացել էին: Այս բոլորը մտածել և իրագոր-
ծել էր Ժենեցի տիկինը. մօր և որդու ցըն-
ծալի ուրախութիւններն արտացօլեցին նոյն-
պէս այդ տիկնոջ դէմքին և նրա սիրտը բերկ-
րութեամբ լցրին:

Բայց այն սիրուն Ալպեան այժերն ու
օրսօրդները, հրաշալի արձիւնները՝ Ժայռերի
վրայ, որ դարսուած են Ժենեի մեծ խանութ-
ների լուսաւոր պատուհանների ետևը՝ Թու-
սին է քանդակել:

Թուսին իր ամենասիրուն ու ամենից յա-
ջող կերպով քանդակած իրերը ոչ թէ խա-
նութ էր ուղարկում՝ թանկ գնով վաճառե-
լու, այլ այն Ժենեցի տիկնոջը, որին մինչև
մահ երախտապարտ մնաց:





ՀՀ Ազգային գրադարան



NL0596434

